ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Աբովյան համայնքի կարիքների համար հաշվառման և չափագրման ծառայություններ ձեռք բերելու նպատակով «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-22/11» ծածկագրով գնանշման հարցումով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

08/04/2022 թ.
ժամը 16:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ե. Ավետիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյան Է. Մանուկյան, Գ. Խաչատրյան, Լ. Իսահակյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Զոհրաբյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-22/11» ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:
Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

1. «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-22/11» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի մասին
(Ե. Ավետիսյան)

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2022 թվականի ապրիլի 8-ին, ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-22/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին
(Ե. Ավետիսյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Անվանումը
1	«Էքսպերտ» ՍՊԸ
2	«Գեոլենդ» ՍՊԸ
3	«Պոլիգոն» ՍՊԸ
4	«Կարինե Համբարձումյան» ԱՁ
5	«ԻՆԵՔՍ» ՍՊԸ

6	«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ե. Ավետիսյան)

3.1 Ընթացակարգին «Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի N2 հավելվածը կցված չէ www.armeps.am կայքում: Հանձնաժողովը որոշեց մերժել «Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

3.2 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Նախահաշվային գին
Աբովյան համայնքի կարիքների համար հաշվառման և չափագրման ծառայությունների ձեռքբերում					
1	«Պոլիգոն» ՍՊԸ	3 000 000	_	3 000 000	5 550 000
2	«Գեոլենդ» ՍՊԸ	5 300 000	_	5 300 000	
3	«Կարինե Համբարձումյան» ԱՁ	6 650 000	_	6 650 000	
4	«ԻՆԵՔՍ» ՍՊԸ	13 000 000	_	13 000 000	
5	«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ	12 000 000	2 400 000	14 400 000	

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

*Առաջարկված գինը մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ե.Ավետիսյան)

Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում

առկա են հրավերով պահանջվող բոլոր /պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.
ա) «Պոլիգոն» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 1.3.3 կետում դրված չէ ստորագրությունը, 2.10 ա կետում կատարված չէ համապատասխան նշումը:
բ) «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 1.3.3 կետում ստորագրությունը դրված չէ, 2.10 ա կետի նշումը դրված չէ:
գ) «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 4.5 ա կետում կատարված չէ համապատասխան նշումը:
դ) «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 1.3.2 կետում էջերի քանակը նշված չէ, 4.5 կետը լրացված չէ:
Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝
«Պոլիգոն» ՍՊԸ-ին, «Գեոլենդ» ՍՊԸ-ին, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ին և «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին ուղարկել ծանուցում՝ օրենքով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին

(Ե. Ավետիսյան)

Հաշվի առնելով այն, որ գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 12.04.2022թ. ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ե. Ավետիսյան
Անդամներ՝		Ջ. Սարգսյան
		Է. Մանուկյան
		Գ. Խաչատրյան
		Լ. Իսահակյան
Համակարգող		Տ. Զոհրաբյան